



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. hsaugt.abovyan.kotayq@mta.gov.am

16-ը ապրիլի 2023թ.

**Արովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի
շնորհավորական ուղերձը Ոստիկանության օրվա առթիվ**

2001թ. ապրիլի 16-ին ՀՀ-ում ընդունվեց «Ոստիկանության մասին» օրենքը, այս օրը մեր երկրում նշվում է որպես ոստիկանության օր:
Մասնագիտական օրվա առիթով շնորհավորում եմ իրավապահ մարմինների ներկայացուցիչներին և ոստիկանության բոլոր ստորաբաժանումների ծառայողներին: Իրավահավասար հասարակության ստեղծման, հասարակական կարգի պահպանման, հանցավորության դեմ պայքարի և երկրի ներքին կայունության ապահովման հարցում ոստիկանությունը անչափ կարևոր դեր ու ներդրում ունի: Կարևոր այս գործառույթներից գատ՝ մենք պետք է հիշենք, որ ոստիկանության ներկայացուցիչները անուրանալի ծառայություն են մատուցել նաև երկրի պաշտպանության հայրենանվեր գործում: Խոնարհում ու հավերժ հիշատակ հայրենիքի պաշտպանության համար զոհված ոստիկաններին:
Վստահ եմ, որ մենք ունենք քաղաքացիների շրջանում օրինակելի և հարգարժան, իրենց գործի նվիրյալ ոստիկաններ, ովքեր արթնացնում են պաշտպանվածության և համընդհանուր վստահության զգացում, նպաստում բնակիչների քաղաքացիական գիտակցության բարձրացմանը և հասարակայնորեն օգտակար նպատակների իրագործմանը: Ոչ միայն մասնագիտական, այլև մարդկային բարձր որակներով պետք է օժտված լինի ոստիկանը իր պատասխանատու աշխատանքում, քաղաքացիների հետ շփման մեջ ցուցաբերի օրինապահ, բայց և բարեխիղճ ու համբերատար մոտեցում: Հարգարժան ոստիկաններ:
Մենք գնահատում ենք ձեր բարոյ, պատասխանատու և հանրօգուտ աշխատանքը: Մասնագիտական օրվա առիթով կրկին շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում բարեկեցություն և ձեր ընտանիքներում, հաջողություններ ու անվտանգ ծառայություն մասնագիտական ոլորտում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ